

# ԲՈՒՀԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐԸ ՄԱՏԵՆԻՑ

ՏԱՆ ՈՐԴԻՈՑՆ ԹՈՐԳՈՍԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Յաղագս թագաւորելոյ Պապայ յերկրին Յունաց, եւ գալոյ ի Հայս, եւ յինքն ունելոյ գաշխարհի իւր. եւ կամ որ ինչ միանգամ գործեաց, եւ յաջողեցաւ նմա:

2 Ապա յետ այսր ամենայնի Սուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն մնացելոյն՝ որ միանգամ մնացեալ էին, եւ չոգաւ հանդերձ նոքաւ առ թագաւորն Յունաց: 3 Եւ եցոյց զպաղատանս աշխարհին Հայոց, եւ զամենայն անցս տառապանաց՝ որ անցեալ էր ընդ նոսա, եւ ինդրեաց ի կայսերէն զՊապ զորդի Արշակայ թագաւոր ի վերայ Հայոց աշխարհին: 4 Մեծ թագաւորն Յունաց թագաւորեցոյց զՊապ զորդին Արշակայ ի վերայ աշխարհին Հայոց, որպէս եւ ինդրեաց նա ի նմանէ. եւ մեծապէս թիկունք լինէր արքայն Յունաց, եւ զՏերենտ անուն ստրատելատն եւ զԱդէ ոմն կոմս արծակէին ընդ արքային Պապայ յերկիրն Հայոց վեց հարիւր բիւրու:

5 Եւ եկին հասին ի սահմանս Հայոց. եւ Սուշեղ լինէր զաւրավար սպարապետ Հայոց փոխանակ Վասակայ հաւր իւրոյ: 6 Եւ գային ի մի վայր ժողովին ամենայն ցրուեալք փախուցեալք թագուցեալք, որ էին յերկրին Հայոց, գային եւ ի մի վայր բովանդակէին, եւ լինէին ի ինդիր սրբոյն մեծի հայրապետին Ներսեսի թագաւորն եւ ամենայն մարդիկ աշխարհին Հայոց, մեծամեծք գաւառակալք եւ գաւառատարք: 7 Որք եկեալք ժողովեալք, զկաթողիկոսն զմեծն Ներսես ինդրէին. զի գիտէին թէ նա կարող է աղաւթս առնել, եւ ինդրել յԱստուծոյ վասն շինութեան ամենայն աշխարհին Հայոց, եւ փրկել ի թշնամեացն. եւ դարձեալ զի՛նչ եւ ինդրէր յԱստուծոյ, տայր Աստուած նմա. եւ միւս եւս, զի իմաստութեամբ իմն կարէր սոցա զաւգտակար խրատն մատուցանել: 8 Վասն այսորիկ ոչ եթէ փոքր ինչ էր ինդիրն այնպիսելոյն առն լինել, որ կարէր նոցա զաւգուտ խրատու իմաստութեան շնորհել, եւ ըստ ժամանակին դիպացն պատահելոյ՝ միտս աւգտակարս դնել, որովք զճանապարհս՝ որ կայրն առաջի՝ գնալ մարթասցեն:

9 Ապա ինքն թագաւորն Պապ երթայր հասանէր գտանէր զեպիսկոպոսապետն Ներսես հանդերձ աւագայնովն Հայոց. աղաչէր զնա, զի հայր Հայոց ամենայն աւգտի խրատու առաջնորդ՝ եւ ինդրեսցէ եւս վասն նոցա: